

ՍՏՈՒԹԵԱՆ ԵԽ ԿԵՂԾԻՔԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ.

Ա.

Քաղաքակրթութեան զարդացման և տարածման գործում մամուլը շատ կարեոր տեղ է բռնում։ Նորագոյն ժամանակի առաքելութեան դլխաւոր գործոնն է նաև կենդանի խօսքի հետ, որի ազդեցութիւնը թէև զօրեղ, բայց սահմանափակ է, մամուլը գարձել է մտքեր տարածելու, գիտակցութիւնը սրելու և բարոյապէս ազդելու լաւադոյն միջոցը։ Մամուլի նշանակութիւնը մեծ է յատկապէս մեզ նման կիսակիրթ ազգերի համար։ որովհետեւ շատ շատերն իրենց ամբողջ ծահօթութիւնն ու աշխարհայեացը միմիայն լրագրութիւնից են ստանում։ Նոքակրկնում են և շատ անգամ էլ կեանքի մէջ գործադրում, առանց կարող լինելու քննութեան ենթարկել, այն մտքերը, որ կարգացել են լրագրութեան մէջ։ Մամուլի կոչումը մեծ է և սրբազն։

Բայց տարաբաղդաբար մեր իրականութիւնը դորահակառակն է ապացուցանում։ Քիչ չեն այնպիսի անձինք, որոնք մամուլի հիւրասիրութիւնն իրենց գծում և անձնական անմաքուր նպատակներին են ծառայեցնում։ Քիչ չեն մանաւանդ մամուլի շուրջը խմբուած մարդիկ, որոնք անձնական խծրճանքն ու վիրաւորանքը, անտեղի կերպով, յատկապէս բանակութիւների ժամանակ, հակառակորդներին ցեխուտելն ու սեացնելը, հրապարակորէն ստելն ու կեղծելը սովորական երկոյթ են դարձեր։ Գրողն այլ ևս չի կարմրում, իսկ ընթերցողն անտարբեր է գարձել դէպի այդ տեսակ վարմունքը։ Կրկնում ենք, ստութիւնն ու կեղծելը մամուլի որոշ հերոսների համար նկատուել է որպէս լաւագոյն զէնքը հակառակորդներին, չսիրած մարդկանց կամ հաստապւթիւններին վարկաբեկ անելու, իսկ ընթերցող հասարակութեան համար դարձել է այն սովորական և առօրեայ երկոյթ մինչ այն աստիճան, որ վաս-

տերի ակներեւ յեղաշրջութիւնը, մերկ ստութիւնը համեմած նոյն խոկ լվտի, փողոցային հայ հոյանքներով, անտարբեր կարդում, անցնում է, թայց ոչ միայն այդչափ, այլ և ընթերցողներ կան, որոնք լրագրութիւնից համ ու հոտչեն առնում, եթէ հայ հոյանք չկայ մէջը։ Տարիների սովորութիւնը փչացրել է նոյն խոկ ընթերցողների ճաշակը։ Մամուլի խօսքը վերոյիշեալների շնորհիւ այլ ևս անպայման համազօր չէ աղնուութեան և ճշմարտութեան։ մամուլ գաղափարի հետ միացել է նաև ստութեան և կեղծիքի գաղափարը։

Այդ մեթոդը լիսուլի կերպով գործադրուած է յատկապէս հայ հոգեորականութեան և եկեղեցու վերաբերութեամբ։ Ոչ միայն մեր խոկական պակասութիւններն են քննադատութեան նիւթ դարձել, այլ երեակայական, չեղած «իրողութիւններ» փաթաթուել են մեր վզին և փողոցային հայ հոյանքների առիթ տուել։ Քիչ չեն գրչի խծրագներ, որոնք կարծել են պաշտօն են մատուցանում, եթէ կհայ հոյեն եկեղեցին ու հոգեորականութիւնը, նոյն խոկ բոլորովին սուտ և անտեղի պատճառներով։ Կիսակիրթ թղթակիցներ, լրագրական յօդուածները հազիւ կարդացող և հասկացող «լուսաւորեալներ» իրաւունք են համարել թութակի պէս կրկնել մաշուած, անհամ և անիւմաստ խօսքեր եկեղեցու և հոգեորականութեան ժիշտասկարութեան մասին և համեմել իրենց գրուածները անվայել խօսքերով։ Եւ այդ տարիների ընթացքում։ Եթէ մենք հնարաւորութիւն ունենայինք թուելու, թէ որչափ սուտ և շինծու լուրերով, իրողութեան յեղաշրջամբ և անհամապատասխան գունաւորութեամբ, սիստեմատիկ կերպով, աշխատել են վարկարեկ անել որոշ մարդկանց աչքին փուշ դարձած ևաստուտծաբաններին։ Երիտասարդների մի խումբ, ճեմարանական և համալսարանական կրթութիւն ստացած, օւխտել են իրենց ուժերը նուիրել մեր հինաւուրց, ազգային եկեղեցու սպասաւորութեան, — նորա մէջ քրիստոնէական և քաղաքակրթական կենդանի

ոգին նորից բորբոքել, հայ անցեալ և ներկայ կեանքի ռւսումնասիրութեամբ զբաղուել, եկեղեցու սպասաւորութեան նոր սերունդ տալ, դիտակից ժամանակի դրական պահանջներին, բայց և անյօղդողը անցաւոր քամիների առաջ—բայց ինչ տեսակ լուսանքներ ասէք չեն թափուել նրանց դլսին։ Ի՞նչ խոչնդուսներ ասէք չեն դրել նրանց առաջ դրսից և ներսից։ Ձեռնադրուել են տղէտ քահանաներ, մեղաւորը աստուածաբաններն են, վանք են մտել նոյն իսկ նրանց բողոքների հակառակ իրենց կոչման միանդամայն անհամապատասխան անձինք, մեղաւորը աստուածաբաններն են, պարտազանց է գտնուել այս կամ՝ այն վարդապետը, հայհոյանքը դարձեալ «աստուածաբանների» դլսին է թափուել, ձախորդ կարգադրութիւններ են եղել Վեհարանից կամ Սինոդից անշուշտ մեղաւորը աստուածաբաններն են։ Ստեղծուել է արուեստական կերպով ստութեան, կեղծիքի և նախապաշարմունքի մի մթնոլորտ, որ ճիւազի պէս նստել է մարդկանց ուղեղում և թոյլ չի տալիս տեսնել իրողութիւնը և դատել տրամաբանութեան թելադրութեան համաձայն։

Բ.

Այս խնդրում ամենից աւելի եռանդ են ցոյց տուել վերջին ժամանակներո Դաշնակցութեան օրգանները։ Մենք դէմ՝ չենք անաչառ քննադատութեան։ Հայ, ներկայ հոգեորականութեան վերայ էլ չենք նայում ըստ ամենայնի կատարեալ, քննադատութիւնից բարձր և իւր պարտաւորութիւնները լիովին ըմբռնող ու կատարող դասակարգի վերայ։ Տարաբաղդաբար մենք շատ պակասութիւններ ունինք և կարօտ ենք վերակազմութեան, ինչպէս և պակասութիւններ ունին մեր հասարակական գործիչներից շատերը։ Հոգեորականների մէջ ևս կան իրենց կոչմանն անհամապատասխան անձնաւորութիւններ, դրամական հաշիւների մէջ կտսկածելի կամ անհարազատ մարդիկ, ինչպէս և հասարակութեան վստահութեանն արժանացած և

ընտրուած երեսփախների և ուրիշ ասպարեզներում դորձող աշխարհականների մէջ։ Ամէն մէկին, լինի հոգի որական թէ աշխարհական, ոլէտք է իւր դործով դատել, անհատական սխալն ու պարտադաշտութիւնը վերադրել ընդհանրութեան և անմեղ մարդկանց երեսին մուր քսել ոչ արդարութիւն է, ոչ քննադատութիւն և ոչ կրթուած ու ազնիւ մարդուն վայել գործ։ Եթէ Դաշնակցութեան մէջ դեր կատարող այս ինչ անձը կրանել է բարի նպատակով հաւաքուած և իրեն յանձնուած փողերը, զբաղուել է աւազակներին վայել դրամաշորթութեամբ, գիւղերում պղծել է ընտանեկան որրութիւնը, իւր ոյժն ու զօրութիւնը գործադրել է անձնական կեղտու հաշիւների համար . . . մենք իրաւունք չունինք նոյն կազմակերպութեան յայտնի և անցայտ զեկավարներին անխտիր գող, աւազակ, անբարոյական անուանելու։ Մի շատ պարզ և հասկանալի ճշմարտութիւն։ Բայց տարաբազդաբար այս պարզ և տարբական ճշմարտութեան միանգամայն հակառակ վարմունք է ցոյց տրուած հայ հոգեւորականութեան դէմ, և ինչպէս ասացինք, վերջին ժամանակներս յատկապէս Դաշնակցութեան թերթերի մէջ։ Բազմաթիւ փաստեր կարող էինք բերել մեր ասածները ամէն կողմից լուսաբանելու և անհերթելի կերպով ապացուցանելու համար, եթէ թերթելու լինէինք մի երկու տարուայ լրագիրների համարները։ Բայց շատ հեռու գնալու կարիք չունինք, ամենամօտիկ անցեալն էլ կարող է այնքան փաստեր տալ, որ ընթերցողների համար պարզ լինի, թէ ինչ այլանդակութեան է հասել այդ երեսյթը մեր մէջ։

«Կովկասի Առաւօտ» № 20 հաղորդում է. «Կօշ գիւղի եկեղեցին վազուց ի վեր ծառայել է իբրև ուխտատեղի էջմիտծնի գաւառի գիւղացիներին, և այդ կօպէկ-կօպէկ հաւաքած արգիւնքը շարունակ տարուել է էջմիածին «աստուածաբանների» որկորը լցնելու։ . . . Բացատրութիւններն աւելորդ են ցոյց տալու, որ ազնիւ և շիտակ մարդկանց համար անվայել է այսպիսի անտեղի հայ-

Հոյանկներսի մի խումբ հոգեորականների վարկաբեկ առնել, որպանք իրենց գլուխութեամբ և ծառայութեամբ միայն խրախուսանքի և համակրութեան պիտի արժանանային:

Սակայն գուցէ այդ զրել է գաւառական մի խակ թղթակից, որ հաշիւներ է ունեցել «աստուածաբանների» հետ Տեսնենք ի՞նչ տեսակ վերաբերմունք է ցոյց տալիս Դաշնակցութեան լայտնի գործիչներից մէկը՝ պ. Խաժակ, որ տարիններից ի վեր ծառայում է մեր մասուլին: Նա նոյն թերթի № 27-ում մի գրախօսութեն է գրել նօէլ Դոլէնսի և Ա. Խոչչի հեղինակած Հայոց պատմութեան մասին: Աստուածաբանների հետ ամենելին կապ չունեցող մի խնդիր: Բայց տեսէք, որ սրամիտ հայհոյաբանը այստեղ էլ առիթ է գտել իւր պաշտօնը կատարելու և այդ առիթն այն է, որ աստուածաբանները մինչև այժմ Հայոց պատմութիւն չեն գրել: «Ոչ յիշեալ դպրոցների (Ներսիսեան դպրոցի, Լազարեան ճեմարանի ևն.) մեծամիտ պատմաբաններից, ոչ էլ Էջմիածնի պղեծը, ինքնահաւան ասուուածարաններից» Հայոց պատմութիւն չստացանք: Բարոյական զգացումից զուրկ պէտք է լինել, մարդկանց առանց որ և է պատճառի «պղերգ», «ինքնահաւան» անուանել: Եւ տեսէք ով է ուրիշների մէջ մեծամտութիւն և ինքնահաւանութիւն տեսնում, պ. Խաժակը, որ անտեղի մեծամտութեան և ինքնահաւանութեան մարմնացումն է: Աստուածաբանները պատասխանատու պաշտօնների ծանրութեան տակ ճնշուած լինելով հանդերձ, գարձեալ աշխատել են իրենց լուման ձգել հայագիտութեան գանձանակը՝ եկեղեցական պատմութեան և մատենագրութեան վերաբերեալ ուսումնասիրութիւններով և հրատարակութիւններով, աշխատել են տարիներով կրօնական և եկեղեցական հրապարակախօսութեան ասպարիզում, Եւրոպայում նոյն իսկ անուն են ստացել իրենց գիւտերով, բայց կամաւ կուրացողների համար ի՞նչ անէինք, որ տեսանելի լինէին:

Միայն «աստուածաբանները» չեն, որ անբարեխիղն և անարդար յարձակման և դատապարտութեան են ենթար-

թարկուել, այլ էջմիածնի ամբողջ միաբանութիւնը։ Նոյն թերթի № 25-ում՝ «Մամուլ» վերնագրի տակ մայրաքաղաքի թերթերից քաղուածօրէն մէջ է բերուած հետևեալը։ Սոլովեցկի մենաստանի 200 միաբանների համար գնուած է 600 վեդրոյ արագ, որ հաշուելով 12000 շիշ և այն էլ 6 ամսուայ համար, իւրաքանչիւր պանականին գալիս է ամսէնը 10 շիշ։ Եւ ահա մեր խղճից զուրկ գրչակներն օդուուելով այս լուրից, հետևեալ տողերն են աւելացրել։ «Հազիւ թէ հայ հոգեորականութիւնը և «օրհնուած խմիչքով» հարուստ էջմիածնի միաբանութիւնը Սոլովեցկի միաբանների այս առաքինութիւններից պակաս չափով օժտուած լինին։

Բացարձակ սուտ է այս և աններելի զրպարտութիւնն էջմիածնի միաբանները արագ չեն ստանում և ոչ մի կաթիլ։ Նրանց ստացածը ամսական մի վեդրոյ գինի է, վեդրոն 16 շիշ, ուրեմն իւրաքանչիւր միաբանին գալիս է օրական $\frac{1}{2}$ շիշ։ Ծաշին եւ ընթրիքին միասին։ Սորա համար մի ամբողջ միաբանութիւն արքեցող հոչակել, որից առաջնորդներ ու հասարակական ուրիշ ծանրակշիռ պաշտօնեաներ են դուրս գալիս, նշանակում է բարեխղճութեան նշաւից զուրկ լինել և սուտն ու կեղծիքը ճանապարհ ընտրել էջմիածնի միաբանութիւնը վարկարեկ անելու։

Մի ուրիշ փաստ։ Էջմիածնի նիւթական դրութիւնը վերջին տարիներս շատ սուզ է դարձել։ Դորա պատճառները շատ են. այստեղ անյարմար է մի առ մի այդ խնդրի լուսաբանութեամբ զբաղուել։ Բայց անմասն չեն և այն «քննադատ» պարոնները, որոնք այս հանդամանքից օժտուելով, աշխատում են պղտոր ջրում ձուկ որսալ։ Ծածուկ չէ, որ անբարեմիտ անձինք շատ տեղերում դայթակղեցրել են ժողովրդի միտքը, թէ հոգեւոր տուրքեր չպէտք է տալ. ոչ միայն վիճակներից ցամաքել են աթոռահաս կոչուած տուրքերը, այլ և վանական կալուածների եկամուտները կիսով չափ։ Եւ այդպիսի քարոզչութիւն մզուել է բերանացի և գրաւոր՝ լրագրութեան մէջ՝ «Ղտակ»

և նորա նախորդ թերթերում։ Եկամուտների նուազման նպաստել է անշուշտ և մեր հագեստ ատեանների գանձման և հաշուապահութեան հնացած և սխալ եղանակը։ Բայց կրկնում եմ, թողնենք այս երեսութիւ պատճառների լուսաբանութիւնը։ Իրողութիւնն այն է, որ էջմիածինը նիւթական կողմից այժմ մի տակնապալից վիճակ ունի. միաբանութիւնը յունիսի վերջերից մինչեւ այժմ ռոճիկ չէ ստացել. եղած գումարները յատկացուել են ճեմարանին և միւս հաստատութիւններին։ Միաբանները կառավարուել են պարագով, նեղութեամբ և ոչ մի տրաունջ չեն յայտնել, որպէս զի հաստատութիւնների կարիքը հոգացուի իրերի այսպիսի դրութեան մէջ, երբ հանգուցեալ կաթուղիկոսի թաղման պատճառով այնքան պատգամաւորներ էին հաւաքուած էջմիածնում զանազան քաղաքներից, բնական էր, որ Տ. Տեղակալը Մ. Աթոռի նիւթական անձկութեան մասին տեղեկութիւն յայտնէր և շեշտէր յատկապէս ճեմարանի վիճակը, որ ամենամեծ ծախքն է պահանջում մեր հաստատութիւնների մէջ։ Այդ պաճառով, երբ հայոց բարձրացաւ յաւերժացնելու հանգուցեալ կաթուղիկոսի յիշատակը, պատգամաւորներից շատերը այն միտքը յայտնեցին, թէ կարելի է նորա անունով հաւաքուած գումարը ճեմարանի որ և է մասին, օրինակ ուսուցիչներ պատրաստելու գործին, յատկացնել, և դորանով ասլահովել այդ կարեսը հաստատութեան վիճակը, փոխանակ նորերը հիմնելու կարճ ժամանակից յետոյ փակելու կամ մի կերպ քաշքշելու համար։ Այս հարցը արձագանդ գտաւ թէ պատգամաւորական ժողովում և թէ մամուլի մի մասի մէջ։

Բայց «Վտակի» հետ կապուած անձնաւորութիւններ ուրիշ միտք են արտայայտել. ուստի պէտք էր ամէն տեսակ սուտ ու շինծու տեղեկութիւններով թուլացնել ճեմարանին օգնելու գաղափարը։ Եւ ահա մի ոմն Առլան բոլորովին անհիմն թուերով «Վտակի» 6 և 7 համարներում ի լուր աշխարհի հրատարակում է, որ ճեմարանը ապահով է և եթէ օգնութիւն անուի, այդ կլինի միայն

«յօդուա էջմիածնի վանականների և ոչ Դէորդեան ճեմաւրանի»։ Բայց անքարեխզճութիւնը գորանով չի վերջանում, այլ գէպքից օգտուելով լուսանքներ է թափում Սինոդի անդամների և միաբանութեան վերայ։ Նա պնդում է, թէ ճեմարանի եկամուտները «հաշում են վանքի տնտեսութեան տնօրինների ձեռքին, զուցէ եւ գրականներում», «որ ճեմարանը չի ստանում իր գումարները, իր սեփական միջոցները», այլ «Ճրիակեր քախտախինդիլները» «վատնելով իրենց կարիքների համար Դէորդեան ճեմարանի միջոցները, անտեղեակ հասարակութեան առաջ ողբում ու աղաղակում են ճեմարանի անապահովութեան մասին, եթէ մի օր վակուի ճեմարանը, դրա միակ պատասխանատուն էջմիածնի միաբանութիւնը, Սինոդը և վանքի տնտեսութեան նկատելի և աննկատելի վարիչները պիտի համարուին, թէ հոգեոր ճեմարանը աստուածաբաններ և հոգեորականներ պատրաստող հաստատութիւն չպէտք է լինի . . . և այլ այսպիսի հայհոյանքներ ու արտառոց մտքեր։ Այս բոլորի լաւագոյն պատասխանը կլինէր, եթէ ա. Սինոդը մի առ մի թուերով ցոյց տար, թէ նրանք բռն, իսկական եկամուտ է ունեցել ճեմարանը իւր 33 ամեայ գոյութեան ընթացքում և նրանք հարիւր հազարներ է ծախսել Մ. Աթոռը իւր գանձարանից, զրկելով իրեն նոյն իսկ ամենակարեոր վայելչութիւնից։ Անշուշտ Մ. Աթոռի բարոյական պարտքն է այդպիսի մի հաստատութիւն պահել և հնաւորութեան չափ աւելի և աւելի պայծառացնել, քայց մեր սահձարձակ պարոններն էլ փոքր ինչ պատկառանքի և ճշմարտութեան զգացում պիտի ունենան գրիչը շարժելիաւ»։

Գ.

Մհնք կարող էինք աւելի երկարել և թուել այդպարոնների գործադրած անվայել միջոցները հայ հոգեորականութիւնը վարկարեկ անելու։ Բայց կարծում ենք նրանց վարմունքը լուսաբանելու համար յիշածներն էլ

բաւական են. Ամէն ազգի մէջ, մեր մէջ ևս կան մարդիկ, որոնք կրօն, եկեղեցի, հոգեորականութիւն անոլէտք և վնասակար են համարում. արդելք լինել չենք կարող, որ այդ տեսակ նախապաշարմունքով մարդիկ լինին, որոնք տգիտութեան զո՞ն լինելով, իրենց տգիտութիւնն ևս իրեն թանգարին ապրանք վաճառք են հանում: Բայց մենք իրաւունք ունինք պահանջելու, որ նրանք իրենց համոզումների համար ազնիւ և բարեկիրժ մարդկանց վայել ճանապարհով աշխատեն և ոչ ստութեան ու կեղծիքին «Սուտի պոչը կարճ կլինի»: Երկար չի քաշիլ և իրենց ցանած սերմերը, իրենք էլ կհնձեն և կլսրուին այն ցեխի և կեղտի մէջ, որ այնովէս անխնայ պատրաստել են ուրիշների երեսին շպրտելու: Միթէ նշանները ակնյայտնի չեն: Գոնէ իմաստութիւն ունենային փրկելու այս շարժման լուագոյն և բարի կողմերը, գոնէ չմեռցնէին ժողովրդի մէջ զարթնած վստահութեան զգացմունքը:

Պարոններ, ձեզ չի վայելում հասարակական փողերի վատնման մասին խօսել: Հաճեցէք ձեր շուրջը նայել, գուցէ շատ հեշտ կերպով ձեզ մօտ գտնէք ուրիշ տեղ որոնած հասարակաց փողեր «վատնողներին», «ձրիակերներին», «բաղդախնդիրներին»: Գուցէ կդտնէք նաև գրամաշորթութեամբ և ազգային փողերով ապահով կեանք վարողների և նրանց «գրպաններում» էլ հասարակաց օգտի անունով հաւաքած շատ գումարների մնացորդներ:

Ուշքի եկէք, բաւական է, որքան ստութեան և կեղծիքի ճանապարհով գնացիք, թունաւորեցիք Զեր խեղճընթերցողների միտքն ու հոգին: Բաւական է, որքան ոտքի տակ տուիք մամուլի սրբութիւնը:

Գ. Վ. Յովսէփեան